ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 մարտի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

22
(3231)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՔՊ-Ն ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ Է ԻՐ ՂԵԿԱՎԱՐԻՆ

«Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի ու ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի դեպքերը ցույց են տալիս զինվորական ծառայության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման անհամաչափ եւ հակասական մոտեցում պետական մարմինների կողմից:

Քննիչների տվյալներով՝ Նարեկ Կարապետյանի՝ ազգային բարերար Սամվել Կարապետյանի եղբորորդու նկատմամբ շարունակվում է զինվորական ծառայության պիտանիության հետ կապված նախաքննություն: ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունից 1lurer.am-ին հայտնել են, որ վարույթը շարունակվում է:

Նույնաբովանդակ հարցով «Ժողովուրդ» օրաթերթը դիմել է եւ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին, եւ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին: Սակայն ՀՀ ՊՆ-ն, «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան, հրաժարվել է տվյալներ տրամադրել. «Հայտնում ենք, որ Հայկ Արսենի կոնջորյանը ծնված 30.05.1987թ. օրենքով սահմանված հիմքով ազատվել է պարտադիր զինվորական ծառայությունից: Միաժամանակ հայտնում ենք, որ Կոնջորյանի պարտադիր զինծառայությունից ազատման հիմքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը մերժվում է՝ հիմք ընդունելով անձնական տվյալների մասին ՀՀ օրենքի 26 հոդվածի եւ Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները»:

Իսկ դատախազությունը պատասխանել է. «Ձեր հարցմանն ի պատասխան՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ դատախազությունում քրեական վարույթի առկայության մասին տվյալներ չկան»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Մինչ իշխանական պատգամավորները ԱԺ ամբիոնից հայտարարում էին, թե նախկին նախարարը «թալանել է», դատարանը դեռ պետք է պարզի՝ 26 անշարժ գույքից որը ումն է, ըստ այդմ՝ արձանագրի «թալանի» մասշտաբները: «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ ԿԳ նախկին նախարար Լեւոն Մկրտչյանն ու նրա եղբայրը՝ գործարար Վահագն Մկրտչյանը, տարիներ շարունակ լարված հարաբերությունների մեջ են եւ անգամ չեն շփվում միմյանց հետ: Այդ ֆոնին խիստ ուշագրավ է, որ Գլխավոր դատախազության ներկայացրած հայցում խոսքը Լեւոն Մկրտչյանից եւ նրան փոխկապակցված անձանցից ինչ-որ գույքեր բռնագանձելու մասին է՝ ներառելով լայնածավալ գույք:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն Ազգային Ժողովին ներկայացրել է իր 2025 թվականի գործունեության հաղորդումը: Փաստաթղթում առանձնահատուկ շեշտադրվում է միջազգային համագործակցությունը, մասնագիտական պատրաստվածության բարձրացումը եւ քննությունների արդյունավետության ամրապնդումը: «Ժողովուրդ» օրաթերթը հաշվետվության թվերը եւ փաստական արդյունքները համադրելով՝ արձանագրեց մի շարք խնդրահարույց կետեր: Տարեկան հաղորդման համաձայն՝ Կոմիտեն համագործակցել է միջազգային մի շարք կառույցների հետ: Թվերը, առաջին հայացքից, տպավորիչ են, միջազգային աջակցությունը՝ համակարգված, վերապատրաստումները՝ բազմաբովանդակ: Բայց ինչպիսի՞ն են արդյունքները:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Armlur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ «Վահան Հովհաննիսյան+30» աղմկահարույց գործով ցմահ դատապարտյալ Տիգրան Ավետիսյանը դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատ է արձակվել: Այս գործով բոլոր 30 անձինք վաղուց ազատության մեջ են: Նա միակն է 31 մեղադրյալներից, որոնք այս գործով 1997թ.-ին դատապարտվել են մահապատժի (2003 թ.-ից ՀՀ նախագահի հրամանագրով՝ ցմահ ազատազրկում)՝ մեղադրվելով Քրեական օրենսգրքի միանգամից 4 հոդվածներով՝ 65-րդ հոդվածի 2-րդ մասով, 65 պրիմ հոդվածով, 232-րդ հոդվածի 1-ին մասով եւ 209 պրիմ հոդվածով (երկու ոստիկանների սպանություն, ի վնաս պետական անվտանգության գործողությունների կատարում, հանցավոր ահաբեկչական խմբում հավաքագրում, ապօրինի զենք-զինամթերքի ձեռքբերում ու կրում): Տիգրանը ծառայել է սովետական բանակում, վերադարձել 1989թ-ին, իսկ մեկ տարի անց սպարապետ Վազգեն Սարգսյանի կոչով անդամագրվել մահապարտների ջոկատին: Չորս տարի մասնակցել է մարտական գործողություններին: Եղել է «Արաբո», «Կոռնիձոր», «Արծիվ-28» կամավորական ջոկատներում:

ԶՐՈՒՅՑ

ՄԱՐԴԻԿ ԱՊՐՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ArmLur.am-ը զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, եվրոպագետ Սոնա Ղազարյանի հետ համապետական ընտրությունների եւ իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ:

-Տիկին Ղազարյան, համապետական ընտրություններից ի՞նչ սպասելիքներ ունենք:

-Վստահաբար, մենք գնում ենք հաղթանակի եւ հատկապես նոր մեկնարկած մեր ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում երբ այցելում ենք համայնքներ, շատ ակնհայտ է դառնում մեր քաղաքացիների վերաբերմունքը մեր քաղաքական ուժի նկատմամբ: Հատկապես շեշտադրումները խաղաղության օրակարգն են, հաստատված խաղաղություն, սոցիալական հարցեր՝ ապահովագրություն, թոշակների բարձրացում, հանդիպում ենք տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, ովքեր ատեստավորմամբ նույնպես բարձրացրել են իրենց աշխատավարձը, ընդհանուր առմամբ շատ դրական տպավորությունով ենք վերադարձել:

-Մենք սոցիալական հարցումներ ենք անցկացրել Երեւանում եւ նկատում ենք, որ իշխանության նկատմամբ բավականին մեծ հիասթափություն կա: Սա ինչո՞վ եք պայմանավորում:

-Ես պետք է ասեմ, որ իմ անձնական շփումներով միանշանակ նման բացասական վերաբերմունք չեմ հանդիպել, եւ մարդիկ հատկապես Երեւանում չեն կարող չնկատել տրանսպորտի ռեֆորմները, մանկապարտեզի աշխատողները չեն կարող չնկատել իրենց աշխատավարձի բարձրացումները, եւ առհասարակ, ֆոնը չի կարող բացասական լինել, քանի որ մարդիկ ապրում են աննախադեպ խաղաղ վիճակում, եւ այդ խաղաղ միջավայրը տրամադրում է դրական մեր քաղաքացիներին:

-Մինչեւ համապետական ընտրությունները կարո՞ղ ենք սպասել, որ Ձեր նշած խաղաղությունը իրապես կհաստատվի, նախաստորագրումից քայլ կարվի վերջնական ստորագրելուն:

-Խաղաղությունը հաստատվել է այն պահին, երբ կողմերը նախաստորագրել են, եւ սկսել է տնտեսական հոսքերը տարածաշրջանում: Ավելի մեծ երաշխիք, քան ապաշրջափակումն է, տնտեսական համագործակցումը, չկա: Ինչ վերաբերում է բուն պայմանագրի ստորագրմանը, մենք ասել ենք, եւ պաշտոնական Երեւանի դիրքորոշումն այն է, որ պայմանագիրը կարող է հենց այս պահին էլ ստորագրվի, մենք սպասում ենք հարեւան պետության՝ ստորագրման պատրաստակամության պահին:

-Այսինքն՝ կարո՞ղ ենք ասել, որ Ադրբեջանը դեռ չի ցանկանում ստորագրել խաղաղության պայմանագիրը:

-Խաղաղության պայմանագիրը նախաստորագրվել է Վաշինգտոնում, եւ ըստ էության, ես կարծում եմ, որ կարող ենք լավատեսորեն տրամադրվել բուն ստորագրման փաստին:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Բուլղարիայի Հանրապետության վարչապետ Անդրեյ Գյուրովին ազգային տոնի՝ Ազատագրման օրվա առթիվ: Շնորհավորական ուղերձում, մասնավորապես, ասված է. «Հայաստանի Հանրապետության կառավարության եւ անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Բուլղարիայի Հանրապետության ազգային տոնի՝ Ազատագրման օրվա առիթով:

Հայաստանը կարեւորում է փոխադարձ վստահության եւ ընդհանուր արժեքների վրա հիմնված մեր երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացումը:

Ուրախությամբ եմ արձանագրում, որ մեր բարեկամ երկրների միջեւ առկա փոխշահավետ գործընկերության բնականոն խորացումն ու ընդլայնումն ամուր հիմքեր են ստեղծել երկկողմ հարաբերությունները որակապես նոր մակարդակի բարձրացնելու համար՝ի նպաստ մեր պետությունների բարօրության:

Բուլղարիան Հայաստանի հուսալի գործընկերն է Եվրոպական միությունում, ժողովրդավարական բարեփոխումների, փոխկապակցվածության եւ տնտեսական զարգացման ակտիվ աջակիցը, եւ մենք հետաքրքրված ենք առավել խորացնելու մեր փոխգործակցությունն այս հարթակում:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք եւ հաջողություն, իսկ Բուլղարիայի բարեկամ ժողովրդին՝ խաղաղություն եւ առաջընթաց»:

ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է

Հայաստանում Իրանի դեսպան Խալիլ Շիրողլամին ներկայացրել է TRIPP նախագծի վերաբերյալ Իրանի դիրքորոշումը: Երեւանում մարտի 2-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ, անդրադառնալով TRIPP-ի վերաբերյալ Թեհրանի դիրքորոշման վերաբերյալ հարցին, դեսպանն ընդգծել է՝ հայկական կողմի հետ քննարկումների ժամանակ իրենք միշտ ասել են, որ այդ ճանապարհը, որը, հնարավոր է, հաղորդակցային տեսանկյունից հնարավորություններ ստեղծի Հայաստանի համար, չպետք է որպես գործիք ծառայի օտարների կողմից Իրանի դեմ գործողությունների համար:

«Նաեւ մենք վերահաստատել ենք մեր աջակցությունը «Խաղաղության խաչմերուկ» նախագծին, եթե այն կարող է ապահովել Հայաստանի շահերը: Հայաստանի իշխանությունները մեզ վստահեցրել են, որ ոչ մի դեպքում այս ճանապարհը ռազմական եւ անվտանգային իմաստ չի ստանա, եւ Հայաստանի ինքնիշխանությունն այդ ճանապարհի վրա կպահպանվի: Մեր եւ Հայաստանի մեջ վստահություն գոյություն ունի»,- նշել է դեսպանը:

«Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության եւ բարգավաճման» նախագծի հիմնարար համատեղ հռչակագիրը Հայաստանի, Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի կողմից ստորագրվել է 2025 թվականի օգոստոսի 8-ին Սպիտակ տանը՝ նպատակ ունենալով նպաստել Հարավային Կովկասում հարատեւ խաղաղությանը: Ծրագրի վերջնական նպատակն է ամրապնդել Հայաստանի եւ Ադրբեջանի բարգավաճումն ու անվտանգությունը եւ խթանել տարածաշրջանային առեւտուրն ու փոխկապվածությունը, ինչպես նաեւ ստեղծել Կենտրոնական Ասիան եւ Կասպից ծովը Եվրոպային կապող նոր տարանցիկ հնարավորություններ:

ՀՀ–ԵՄ ՕՐԱԿԱՐԳ

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Կիրստի Նարինենին:

Կառավարությունից հայտնում են, որ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Ֆինլանդիա երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերը եւ համագործակցության զարգացման հեռանկարները:

Զրուցակիցները երկուստեք կարեւորել են Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումները եւ անդրադարձել ՀՀ-ԵՄ հարաբերությունների ընդլայնման օրակարգին:

ՀՀ փոխվարչապետը եւ Ֆինլանդիայի դեսպանը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային զարգացումների շուրջ:

195 ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ

Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի արդյունքում անհայտ կորած է համարվում 195 անձ: Այս մասին երեկ՝ փետրվարի 3-ին, ԱԺ-ում ասաց ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը՝ անդրադառնալով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանի հարցին:

«Ըստ պաշտոնական տվյալների՝ ունենք անհայտ կորած 195 անձ, որոնցից 175-ը՝ զինծառայող, մյուսները՝ խաղաղ բնակիչ»,-ասաց Գալյանը:

Ինչ վերաբերում է նույնականացված դիերին, նախարարն ասաց, որ վերջին տվյալներով՝ 75-80 դիերի դեպքում նույնականացման արդյունքներն ընտանիքների կողմից չեն ընդունվել: Ըստ նրա՝ կրկնակի փորձաքննություններ իրականացվել են հատուկ փորձագիտական գիտելիքներով օժտված անձանց կողմից եւ հատուկ միջոցներով: Փորձագետները վստահեցնում են, որ նույնականացումը ճիշտ է իրականացվել:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺ

Էմանուել Մակրոնը հայտարարեց առաջադեմ միջուկային զսպման հայեցակարգի մասին եւ հայտնեց, որ այն գրավել է ութ երկրների հետաքրքրությունը: Այս մասին տեղեկանում ենք ewronews-ից:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կավելացնի երկրի միջուկային մարտագլխիկների պաշարները եւ, ինչպես նա ասաց, չի տատանվի, եթե երկրի «կենսական շահերը» սպառնալիքի տակ լինեն: Նա իր թարմացված միջուկային դոկտրինի երկար սպասված շնորհանդեսը ներկայացրեց Բրետանի Իլ Լոնգ միջուկային սուզանավային բազայից:

Մակրոնը հայտարարեց, որ Փարիզն այսուհետ չի բացահայտի իր միջուկային զինանոցի չափը: Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) տվյալներով՝ Ֆրանսիան ներկայումս ունի 290 մարտագլխիկ:

Ֆրանսիան ԵՄ միակ երկիրն է, որն ունի միջուկային զինանոց: ԵՄ-ից դուրս՝ Մեծ Բրիտանիան նույնպես ունի միջուկային զինանոց: Անցյալ գարնանը Մակրոնը ենթադրեց, որ ԱՄՆ-ի հետ փոփոխվող հարաբերությունները եւ տարածաշրջանային անկայունությունը հաշվի առնելով՝նա կարող է ԵՄ երկրները ներառել իր միջուկային հովանու ներքո: Երկուշաբթի օրը իր 45 րոպեանոց ելույթում նա ընդգծեց, որ սա «առաջխաղացման զսպման» նոր հայեցակարգ է, որը լուծում է միայն պաշտպանական կարիքները:

Նա պարզաբանեց, որ ութ եվրոպական երկրներ՝ Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Լեհաստանը, Նիդեռլանդները, Բելգիան, Հունաստանը, Շվեդիան եւ Դանիան, հետաքրքրություն են հայտնել Փարիզի ծրագրի նկատմամբ: Ֆրանսիայի առաջնորդի կարծիքով՝ այս երկրները կկարողանան տեղակայել Ֆրանսիայի ռազմաօդային ուժերի «ռազմավարական ռազմաօդային ուժեր», ինչը թույլ կտա նրանց «տարածվել ամբողջ եվրոպական մայրցամաքում»:

ԿԱՆԱԴԱ–ՀՆԴԿԱՍՏԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ

Կանադայի վարչապետ Մարկ Քարնին եւ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդին մարտի 2-ին հանդիպում են անցկացրել Դելիում, որի ընթացքում քննարկվել են Հնդկաստան-Կանադա ռազմավարական գործընկերությունը եւ առեւտրի եւ ներդրումների ոլորտում համագործակցությունը խորացնելու ուղիները: Այս մասին հաղորդում է BBC-ն:

Հանդիպումից հետո առաջնորդները հանդես են եկել համատեղ մամուլի ասուլիսով, որտեղ Մոդին հայտարարել է, որ բարձր է գնահատում Քարնիի այցը Հնդկաստան եւ Հնդկաստան-Կանադա գործընկերության մակարդակի բարձրացումը:

«Մենք նաեւ քննարկել ենք մինչեւ 2030 թվականն առեւտրի ծավալը մինչեւ 50 միլիարդ դոլարի հասցնելու եւ Համապարփակ տնտեսական գործընկերությունն արագ ավարտին հասցնելու հարցը», - հայտարարել է Մոդին: Նա ընդգծել է, որ Հնդկաստանը եւ Կանադան բնական գործընկերներ են տեխնոլոգիաների եւ նորարարության ոլորտում:

Անդրադառնալով Կանադայի ներդրմանը Արհեստական բանականության գագաթնաժողովում՝ Մոդին շնորհակալություն է հայտնել Քարնիին միջոցառման հաջողությանը նպաստելու համար: Նա նշել է, որ երկու երկրները կհամակարգեն համագործակցությունը տիեզերքի, տեխնոլոգիաների եւ կարեւորագույն հանքանյութերի ոլորտներում:

Քարնին իր այցն անվանել է Հնդկաստան-Կանադա հարաբերություններում գործընկերության նոր դարաշրջան: Նա նշել է, որ երկու երկրները սկսում են ռազմավարական էներգետիկ գործընկերություն՝նաեւ հիշատակելով համագործակցությունը կարեւորագույն հանքանյութերի եւ մաքուր էներգիայի ոլորտներում:

«Մենք առաջ ենք շարժվում Կանադա-Հնդկաստան տնտեսական գործընկերության համաձայնագրի ուղղությամբ՝ նպատակ ունենալով այն կնքել մինչեւ այս տարվա վերջ», - հայտնել է Քարնին: Նրա խոսքով՝ կանադական Cameco ընկերությունը երկարաժամկետ պայմանագիր է կնքել Հնդկաստանին ուրան մատակարարելու համար:

Քարնին նաեւ հայտարարել է մի շարք համաձայնագրերի մասին՝ ուղղված կրթական եւ մշակութային կապերը ամրապնդելուն, այդ թվում՝ բարձրագույն կրթության ոլորտում:

Կանադայի եւ Հնդկաստանի միջեւ հարաբերությունները սրվել էին մի քանի տարի առաջ՝ այն բանից հետո, երբ այն ժամանակվա վարչապետ Ջասթին Թրյուդոն Հնդկաստանի կառավարությանը մեղադրել էր Կանադայի քաղաքացու սպանության հետ առնչության համար: 2023թ. հունիսին Կանադայի Բրիտանական Կոլումբիայի նահանգում սպանված Հարդիփ Սինգհ Նիջարը նաեւ հայտնի սիկհ անջատողական էր: Հնդկաստանը բազմիցս հերքել է իր առնչությունը Նիջարի սպանությանը:

2025 թվականին վարչապետի պաշտոնը ստանձնելուց ի վեր Քարնին սկսել է հարաբերությունների կարգավորումը Նյու Դելիի հետ՝ վերականգնելով դիվանագիտական ուղիները:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

20 ՄԼՆ ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ՎԱՐԿԵՐ

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթեւիկ Ստեփանյանը պաշտոնը ստանձնել է 2021 թվականի ապրիլի 29-ին: Նրա վերջին հայտարարագիրը ցույց է տալիս համեմատաբար համեստ գույքային պատկեր, սակայն թվային դինամիկան առաջացնում է մի շարք հարցեր:

Անշարժ գույք Երեւանում

«Ժողովուրդ» օրաթերթը, ուսումնասիրելով փոխնախարարի ներկայացրած պաշտոնական հայտարարագիրը, արձանագրել է, որ փոխնախարարը հայտարարագրել է մեկ անշարժ գույք՝ անհատական բնակելի տուն Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում: Սակայն խոսքը ամբողջական սեփականության մասին չէ. Ստեփանյանը տան ընդամենը 1/32 բաժնեմասի սեփականատեր է, որը ձեռք է բերել ժառանգության միջոցով 2006 թվականի նոյեմբերի 20-ին: Տրանսպորտային միջոցներ հայտարարագրում նշված չեն:

Հայտարարագրի համաձայն՝ փոխնախարարի բանկային հաշիվներում առկա են հետեւյալ մնացորդները.

- 1,041,649.36 դրամ
- 2,320.2 դրամ
- 4,830.38 դրամ

Ընդհանուր հաշվարկով՝ մոտ 1 մլն 48 հազար 800 դրամ:

Բացի այդ, նա հայտարարագրել է 250.000 դրամ կանխիկ միջոց:

Թվային անհամադրություն

Առավել ուշագրավ է հաշիվների շարժը 2023 հաշվետու տարում: Տարվա սկզբին հայտարարագրված է 0 դրամ բանկային մնացորդ, մինչդեռ տարեվերջին գումարը հասել է 2,064,714.76 դրամի: Այս տարբերությունը՝ շուրջ 2 մլն դրամ, առաջին հայացքից կարող է բնական թվալ՝հաշվի առնելով պաշտոնական եկամուտները: Սակայն հայտարարագրում առանձին նշված ընթացիկ մնացորդների հանրագումարը (մոտ 1,048,800 դրամ) չի համընկնում տարվա վերջի 2,064,714.76 դրամ ցուցանիշի հետ:

Եկամուտներ՝ գրեթե 20 մլն դրամ մեկ տարում

Հաշվետու տարվա ընթացքում Ստեփանյանի եկամուտները կազմել են՝

- Կենսաթոշակ՝508,423.7 դրամ
- Եկամտային հարկի վերադարձ՝4,047,644 դրամ (ՊԵԿ-ից)
- Աշխատավարձ եւ դրան հավասարեցված վճարումներ՝ 15,274,006 դրամ (աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից)

Ընդհանուր եկամուտը՝ 19,830,073.7 դրամ:

Հարկ է նշել, որ 4 մլն դրամից ավելի եկամտային հարկի վերադարձը համեմատաբար բարձր ցուցանիշ է եւ ենթադրում է զգալի չափի հիփոթեքային կամ այլ հարկային արտոնության մեխանիզմ:

Պարտավորություններ՝ 40 մլն դրամից ավելի

Հայտարարագրի համաձայն՝ փոխնախարարի վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 40,787,896.1 դրամ:

Հիփոթեքի առարկան բնակարան է, սակայն դրա գտնվելու վայրը հայտարարագրում նշված չէ:

Ստացվում է հետաքրքիր պատկեր.

- Անշարժ գույք՝ միայն 1/32 բաժնեմաս ժառանգական տան մեջ,
- Սակայն մոտ 41 մլն դրամ հիփոթեքային պարտավորություն բնակարանի համար:

Այս համադրությունը հուշում է, որ փոխնախարարի հիմնական բնակարանը հավանաբար ձեռք է բերվել վարկային միջոցներով եւ դեռեւս ամբողջությամբ մարված չէ:

Հանրային գործունեություն

Տեղեկացնենք, որ Տաթեւիկ Ստեփանյանը նաեւ անդամակցում է ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական եւ իրազեկման կենտրոն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝ որպես անդամ:

«Ժողովուրդ» օրաթերթը եզրակացնում է, որ թվերը, ընդհանուր առմամբ, ցույց են տալիս բարձր պաշտոնային բնորոշ եկամտային մակարդակ եւ զգալի վարկային բեռ: Սակայն բանկային մնացորդների ցուցանիշների միջեւ տարբերությունը եւ տարեվերջի հայտարարագրված գումարի անհամապատասխանությունը առանձին հաշվարկված մնացորդների հետ թողնում են բաց հարցեր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՌԱՋՄԱՆԱՎ ԿՈՒՂԱՐԿԻ

Կիպրոսի պաշտոնյաները հայտնել են, որ Ֆրանսիան ռազմանավ կուղարկի Կիպրոս՝ անօդաչու թռչող սարքերի դեմ պաշտպանությունը հզորացնելու համար, այն բանից հետո, երբ «Ռաշեդ» անօդաչու թռչող սարքը հարվածել էր Կիպրոսում բրիտանական ռազմաբազային: Այս մասին հաղորդում է The Associated Press գործակալությունը:

Պաշտոնյաները հաստատել են, որ Ֆրանսիան նաեւ լրացուցիչ ցամաքային, հակադրոնային եւ հակահրթիռային համակարգեր կուղարկի Կիպրոս:

Գերմանիան նույնպես դրական է արձագանքել ռազմանավ ուղարկելու Կիպրոսի խնդրանքին՝ ըստ երեք պաշտոնյաների, որոնց ինքնությունը չի բացահայտվում: Նրանք ասել են, որ սարքավորումները հնարավորինս շուտ կհասնեն Կիպրոս:

Անօդաչու թռչող սարքը հարվածել էր Բրիտանիայի թագավորական ռազմաօդային ուժերի Ակրոտիրի ռազմաբազային մարտի 2-ի կեսգիշերից կարճ ժամանակ անց: Պատճառվել էր աննշան նյութական վնաս: Մարտի 2-ի ցերեկը բրիտանական ռազմական ինքնաթիռները խափանել են եւս երկու ԱԹՍ, երբ դրանք օդ են բարձրացել ավիաբազայից, հայտնել են պաշտոնյաները:

Հունաստանը Կիպրոս է ուղարկել չորս F-16 կործանիչ, եւս երկու ժամանակակից ֆրեգատ ճանապարհին են:

ԹԵԺ ՃԱԿԱՏ՝ ՄԵԾ ԿՈԲՈՒՍՏՆԵՐ

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) երեքշաբթի հայտարարել է, որ Իրանի «True Promise 4» («Իրական խոստում 4») պատասխան գործողության առաջին երկու օրերին ավելի քան 650 ամերիկացի զինծառայող է զոհվել կամ վիրավորվել:

ԻՀՊԿ խոսնակ, գեներալ Ալի Մոհամմադ Նաեինին հայտնել է, որ իրանական ուժերը հրթիռային եւ անօդաչու թռչող սարքերի հարվածներ են հասցրել տարածաշրջանում տեղակայված ամերիկյան ռազմաբազաներին եւ ռազմանավերին, այդ թվում՝ Բահրեյնում գտնվող ԱՄՆ ռազմածովային ուժերի օբյեկտներին:

Նրա խոսքով՝ հարվածների հետեւանքով վնասներ են կրել Պարսից ծոցի տարածաշրջանում տեղակայված ամերիկյան ռազմական օբյեկտները: Նաեինին նշել է, որ «պատերազմի առաջին երկու օրերին 650 ամերիկացի զինծառայող է զոհվել կամ վիրավորվել»՝ հավելելով, որ ԱՄՆ իշխանությունները կարող են հերքել կամ թաքցնել այդ տվյալները, սակայն իրանական հետախուզական եւ մարտադաշտային տեղեկությունները հաստատում են նշված թիվը:

ԻՀՊԿ խոսնակի փոխանցմամբ՝ իրանական հրթիռներն ու անօդաչուները մի քանի անգամ հարվածել են Բահրեյնում տեղակայված ԱՄՆ ՌԾՈՒ Հինգերորդ նավատորմի շտաբին: Նրա պնդմամբ՝ հարվածներից մեկի հետեւանքով 160 ամերիկացի զինծառայող է զոհվել կամ վիրավորվել:

Բացի այդ, ըստ Նաեինիի՝ իրանական ռազմածովային ուժերը չորս թեւավոր հրթիռ են արձակել ԱՄՆ «USS Abraham Lincoln» ավիակրի ուղղությամբ, որը գտնվել է Չաբահարի ափերից մոտ 250-300 կմ հեռավորության վրա: Նա հայտարարել է, որ հարվածներից հետո ավիակիրը «նահանջել է դեպի հարավարեւելյան Հնդկական օվկիանոս»:

Իրանական կողմը «True Promise 4» գործողությունը ներկայացնում է որպես պատասխան քայլ Իրանի դեմ իրականացվող գործողություններին:

ՈՐՈԾՈՒՄ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՄԱՄՅԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հովհաննես Թամամյանի գործով ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել եւ գործը ուղարկել է դատարան:

Հայտնել էինք, թե ում ցուցմունքի հիման վրա են ձերբակալել ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հովհաննես Թամամյանին: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Թամամյանի դեմ ցուցմունք է տվել առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Եղեգնաձորի շտաբի պետ Էդուարդ Ասատրյանը: Թամամյանը քննչականում որեւէ բան չի խոսել, միակ բանը, որ ասել է՝ «մեղադրանքը չեմ ընդունում»:

Փետրվարի 25-ին Քննչականի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող վարույթի շրջանակում ձեռք բերված փաստական տվյալներով՝ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հ.Թ.-ն 2008 թվականի մարտի 1-ի վաղ առավոտյան առանց հիմնավորման հանձնարարել է ոստիկանության ծառայողներին բռնություն գործադրել Երեւանի Ազատության հրապարակում ընթացող հանրահավաքի մասնակից Է.Ա.-ի նկատմամբ եւ նրան տեղափոխել ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն: Ըստ հաղորդագրության՝ ոստիկանության ծառայողները, կատարելով ակնհայտորեն իրենց լիազորությունների շրջանակից դուրս գործողություն, ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել Է.Ա.-ին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր ծանր վնաս: Ձեռք բերված տվյալների հիման վրա Հ.Թ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 2003 թվականի քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով (պաշտոնեական լիազորություններն անցնելուն դրդելը): 2026 թվականի փետրվարի 25-ին նա ձերբակալվել է՝ դատարան ներկայացնելու նպատակով: Նախաքննությունը շարունակվում է:

Այս քրեական վարույթը ուշագրավ է այնքանով, որ 2008 թվականի «Մարտի 1»-ի գործի շրջանակում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեում կար հարուցված քրեական վարույթ, եւ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ դեռ 2021 թվականին որոշում է կայացվել ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի տեղակալ նույն Հովհաննես Թամամյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Նույն գործի շրջանակում նախկինում հրապարակվել էին մի շարք բարձրաստիճան ոստիկանների անուններ, որոնցից ոմանք եւս ընդունել էին իրենց մեղքը, իսկ նրանց նկատմամբ գործերը կարճվել էին վաղեմության հիմքով: Եթե նույն ժամանակահատվածին առնչվող գործերով մի շարք պաշտոնյաների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության հիմքով, ապա 18 տարի անց նույն իրադարձությունների շրջանակում նոր ակտիվ քայլերը հարցեր են առաջացնում, որքան էլ որ մեղադրանքը խոշտանգում դրված լինի: Հանրային դաշտում արդեն հնչում են գնահատականներ, որ գործընթացը կարող է կրել քաղաքական ենթատեքստ՝ դիտարկվելով որպես նախընտրական փուլում Նիկոլ Փաշինյանի կողմից իրականացվող քարոզչական կամ զսպող գործիք:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

4 ՏԱՐԻ ԴԱՏԱՐԱՆԻ «ԴՌՆԵՐԸ»

Կաթողիկոսի եղբոր որդին՝ Կորյուն Ներսիսյանը, պատրաստվում է ճառին, դատարանում ավատական փուլ է:

Նշենք, որ Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանը տեւական ժամանակ կալանքի տակ մնաց, եւ վերջին ամիսների ընթացքում նրա խափանման միջոցը փոխվեց:

Ինչպես հայտնի է, 2022 թվականի հունիսի 11-ին Ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ. Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն. Դ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն նպաստելու համար, պաշտոնեական դիրքն օգտագործելով, Գ. Գ.-ի եւ Ն. Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն. Դ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք:

Կ. Ն.-ն կաթողիկոսի եղբոր որդին է, որը նախկին դատախազ է եւ 4 տարի է, ինչ դատարանում փորձում է հասնել արդարության:

Ք. Մ.

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է 20 ՄԼՆ ԴՐԱՄ

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ Կ.Ա.-ն, հանդիսանալով ՀՀ-ում գործող ընկերության հաշվետարը, սակայն փաստացի հանդիսանալով այդ ընկերության տնօրենը, 2025 թվականի հունվարի 28-ից մինչեւ 2025 թվականի ապրիլի 14-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային հափշտակությամբ, խմբի կազմում, օգտագործելով ՀՀ-ում գործող բանկերից մեկի էլեկտրոնային սպասարկման կետ հանդիսացող կայքը եւ արտասահմանյան բանկերի թողարկած պլաստիկ քարտերի տվյալները, արտասահմանյան բանկերի քարտապաններից բազմաթիվ գործարքներով փորձել է հափշտակել 764 մլն 358 հզր 558 ՀՀ դրամ գումար:

Արդյունքում, Կ.Ա.-ն հափշտակել է 20 մլն ՀՀ դրամ եւ այն փոխանցել ընկերությունների օգտին ՀՀ ՊԵԿ հաշիվներին՝ այդ գործարքները ձեւակերպելով իբրեւ մաքսային վճարներ՝ առաջացնելով այդ ընկերությունների համար հարկային գերավճարներ՝ դրանով իսկ խեղաթյուրելով հափշտակված առանձնապես խոշոր չափերով գումարի ծագման աղբյուրը:

Այնուհետեւ, Կ.Ա.-ն ինչպես անձամբ, այնպես էլ այլ անձանց միջոցով դիմում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ՝ խնդրելով ներմուծման մաքսատուրքից, ավելացված արժեքի հարկից եւ մաքսային գործառնությունների համար պետական տուրքից առկա գերավճարի 14 մլն 850 հզր ՀՀ դրամը վերադարձնել, որը վերադարձվել է, իսկ գումարի մնացած մասն ուղղվել է նշված ընկերությունների հարկային պարտավորությունների մարմանը:

Ընկերության հաշվետարի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 257-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախությունը) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը): Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, գրավը եւ բացակայելու արգելքը:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է՝ հանցագործությանը ներգրավված անձանց շրջանակը եւ դեպքի ամբողջական հանգամանքները պարզելու ուղղությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները փետրվարի 28-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ էջմիածին քաղաքի 63-ամյա բնակիչը Սոս Մանուկյան եւ Ալավերդյան փողոցների երկու հասցեներում, առանց համապատասխան թույլտվության եւ լիցենզավորման, զբաղվում է տրանսպորտային միջոցների շարժիչի յուղերի եւ դիզվառելիքի վաճառքով: Տեղեկությունները ստուգելու նպատակով համայնքային ոստիկաններն այցելել են նշված հասցեներ: Սոս Մանուկյան փողոցում գտնվող ավտոտնակի եւ բակի ակնհայտ տեսանելի հատվածներում կային 800 լիտրից ավելի շարժիչի յուղով պլաստմասե տարաներ եւ վաճառքի համար նախատեսված սարքավորումներ, իսկ Ալավերդյան փողոցի ավտոտնակում գտնվող տարաների մեջ՝ 2600 լիտրից ավելի տրասպորտային միջոցների շարժիչի յուղ, 130 լիտր դիզվառելիք եւ դրանց վաճառքի համար նախատեսված սարքավորումներ: Կազմված փաստաթղթերը փոխանցվել են նախաքննական մարմին:

30 ԿԳ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Մարտի 2-ին ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության, ՔՈԳՎ Սյունիքի մարզային վարչության եւ Պարեկային ծառայության Սյունիքի մարզի գումարտակի ծառայողների ձեռնարկած համատեղ միջոցառումների արդյունքում Մեղրի քաղաքի Գործարանային փողոցում հայտնաբերվել է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց: Հայտնաբերվել եւ առգրավվել է 24,5 կգ մարիխուանա, 0,5 կգ հերոին եւ 5 կգ մեթամֆետամին տեսակի թմրամիջոց: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները պարզվում են:

3.1 ԿԳ ՈՍԿԻ

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության եւ էլեկտրոնային առեւտրի օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչությունների համատեղ հսկողական աշխատանքների արդյունքում օրերս «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում բացահայտվել է խոշոր չափի՝ շուրջ 3.1 կգ քաշով թաքցված ոսկու ներմուծման դեպք: Օպերատիվ տվյալներ էին ստացվել այն մասին, որ ՀՀ եւ ՌԴ քաղաքացի հանդիսացող անձը նախատեսում է ՌԴ-ից ՀՀ ներմուծել մեծ քանակությամբ ոսկի: Ստացված տվյալներն իրացնելու նպատակով օդանավակայան ժամանելուն պես քաղաքացին վերցվել է օպերատիվ հսկողության: Նրա ուղեբեռի մանրակրկիտ հետազոտման արդյունքում հայտնաբերվել է 3137 գրամ քաշով 4 հատ ոսկյա ձող: Պարզվել է, որ ոսկյա ձողերը ներկված են եղել սեւ եւ արծաթագույն եւ տեղադրված ճամպրուկի ներսի եզրային հատվածներում այնպես, որ արտաքին տեսքով նմանվեն ճամպրուկի կառուցվածքային տարրերին:

Նախնական տվյալներով՝ հայտնաբերված ոսկու ընդհանուր շուկայական արժեքը կազմում է շուրջ 500,000 ԱՄՆ դոլար: Ուսումնասիրվում են նաեւ գույքի ծագման աղբյուրները եւ դրա օրինականությունը հաստատող փաստաթղթերի առկայությունը:

● *Հանրապետությունում փետրվարի 27-ից մարտի 2-ը բացահայտվել է 220 հանցագործություն, որոնցից 19-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ՀՆԴԻԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾ ԿԱ

Մարտի 1-ին ներկուսակցական քարոզարշավի շրջանակներում Նոյեմբերյան այցելած վարչապետ Նիկոլ Փաշինյանին քաղաքի կենտրոնում հանդիպած բնակիչներից մեկը մտահոգություն հայտնեց, որ աշխատատեղ չկա: Ն. Փաշինյանը հակադարձեց. «Ինչպե՞ս է, որ Հնդկաստանից գալիս են Նոյեմբերյանում աշխատում, իսկ նոյեմբերյանցու համար աշխատատեղ չկա՞»: Փաշինյանն իր ասածի իրավացիությունն ապացուցելու համար դիմեց կողքին կանգնածներին. «Նոյեմբերյանում աշխատող Հնդկաստանի քաղաքացիներ կա՞ն»: ՔՊ կուսակցության Նոյեմբերյանի ակտիվիստներից Հայկանուշ Բեգլարյանը հաստատեց, որ Նոյեմբերյանում աշխատող Հնդկաստանի քաղաքացիներ էլ, պարսիկներ էլ կան: Փաշինյանը եռանդով շարունակեց. «Ես իջեւանցի եմ, ես չեմ հիշում, որ Հնդկաստանից մարդ գա, աշխատի, էսօր Իջանում էլ, Նոյեմբերյանում էլ կան»: Նա սկսեց թվարկել կառավարության իրականացրած ծրագրերը, այդ թվում՝ սոցիալական ուղղվածության: Եւ այդտեղ Փաշինյանին օգնության հասավ, սկսեց ծրագրեր թվարկել աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը՝ հավելելով, որ այդ բոլոր ծրագրերի հետ նաեւ հետվճար կա: Ն. Փաշինյանը ասաց, որ ամեն 3-րդ երեխայի դեպքում պետության կողմից վճարվում է 10 հազար դոլար:

Երբ Նոյեմբերյան համայնքի բնակիչը խոսեց պետական օգնությունների մասին, վարչապետը նրան առարկեց. «Մենք օգնություն չենք տալիս, մենք մարդկանց խրախուսում ենք, որ աշխատեն, ապրեն»: Նա խոսեց հարկեր տալու կարեւորության մասին, ապա անցավ ընտրությունների թեմային՝ ասելով. «Հիշո՞ւմ եք, որ ընտրություններին գալիս, տուկի թել էին բաժանում, բրինձ էին բաժանում, որ ձայներ ստանան, բա հիմա կարա՞ս տուկի թելով, ո՞ւմ կզարմացնես տուկի թելով կամ բրնձով կամ 5 հազար դրամով»:

Տարիքով իշխանամետ մի կին Փաշինյանին ասաց, որ դրական շատ փոփոխություններ կան, ասաց, որ ամենամեծ փոփոխությունը խաղաղությունն է, որ Նիկոլ Փաշինյանը բերել է: Կինը Փաշինյանին ասաց, որ շատ լավ կլիներ, որ իրենց տարածաշրջանից Ազգային Ժողովում պատգամավոր լիներ, որը տարածաշրջանի հիմնախնդիրներն ավելի լավ կներկայացներ կառավարությանը, վարչապետն իր որոշումներում դրանք նկատի կունենար: Նիկոլ Փաշինյանը հո չէ՞ր կարող ասել, որ Տավուշի մարզից՝ Իջեւանից, իր մանկության ընկեր Վահե Ղալումյանը ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, սակայն Տավուշի մարզի խնդիրներով չի զբաղվում: Փաշինյանը ծիծաղելով ասաց. «Դե դուք ձեր տարածաշրջանից վարչապետ ունեք»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՆԸ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Իրանի արտգործնախարար Աբբաս Արաղչին հեռախոսազրույց է ունեցել Չինաստանի արտգործնախարար Վան Ի հետ, որի ընթացքում կողմերը քննարկել են տարածաշրջանային զարգացումները ԱՄՆ-Իսրայել ռազմական գործողություններից հետո:

Հեռախոսազրույցի ընթացքում Վան Ին Չինաստանի կառավարության եւ ժողովրդի անունից ցավակցություն է հայտնել Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Խամենեիի մահվան կապակցությամբ, որը, ըստ իրանական կողմի, զոհվել է Իրանի դեմ իրականացված ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունների հետեւանքով:

Ի պատասխան՝ Արաղչին շնորհակալություն է հայտնել զորակցության համար եւ ներկայացրել Իրանում եւ տարածաշրջանում ստեղծված իրավիճակը ռազմական գործողություններից հետո:

Իրանի ԱԳ նախարարը նշել է, որ Միացյալ Նահանգներն ու Իսրայելը խախտել են միջազգային մարդասիրական իրավունքի բոլոր նորմերն ու սկզբունքները Իրանի դեմ իրականացված ռազմական հարձակման ընթացքում, որի հետեւանքով զոհվել են հարյուրավոր խաղաղ քաղաքացիներ: Նա ընդգծել է, որ Իրանի զինված ուժերը վճռական են պաշտպանելու երկրի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը եւ քաղաքացիների անվտանգությունը:

Արաղչին անդրադարձել է նաեւ քաղաքացիական զոհերին՝ հիշատակելով, մասնավորապես, Մինաբ քաղաքում գտնվող տարրական դպրոցում 168 աղջիկների սպանությունը, ինչպես նաեւ հիվանդանոցների թիրախավորումը: Նա միջազգային հանրությանը կոչ է արել խստորեն դատապարտել ԱՄՆ-Իսրայել ռազմական գործողություններն ու իրանցի խաղաղ բնակիչների սպանությունը:

Տարածաշրջանային հարաբերությունների համատեքստում Արաղչին շեշտել է, որ «Իրանը թշնամություն չունի Պարսից ծոցի տարածաշրջանի երկրների հետ եւ վճռական է շարունակելու բարիդրացիական հարաբերությունները նրանց հետ»:

Նա հավելել է, որ Պարսից ծոցի որոշ երկրներում տեղակայված ամերիկյան ռազմաբազաների դեմ Իրանի պաշտպանական գործողությունները չպետք է դիտարկվեն որպես հարձակում այդ երկրների վրա, այլ որպես օրինական պատասխան ագրեսիայի աղբյուրին:

Իր հերթին, Վան Ին վերահաստատել է Չինաստանի աջակցությունը Իրանի ինքնիշխանության, անկախության եւ արժանապատվության պաշտպանությանը՝ միաժամանակ դատապարտելով ԱՄՆ-ի եւ Իսրայելի «անօրինական ագրեսիան»:

Կողմերը քննարկել են նաեւ պատերազմի ընթացքում հյուպատոսական համագործակցության հարցերը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ շուտով պարզ կդառնա, թե ով է վերահսկելու Իրանը: Այս մասին նա ասել է NewsNation հեռուստաալիքի հետ հարցազրույցում:

«Դուք շատ շուտով դա կիմանաք»,- ասել է Թրամփը՝ պատասխանելով համապատասխան հարցին: ԱՄՆ նախագահի խոսքով՝ Իրանում ցամաքային գործողության անհրաժեշտություն, ամենայն հավանականությամբ, չի լինի:

«Մենք շատ մեծ ծավալի վնաս ենք հասցնում: Մենք նրանց հսկայական վնաս ենք հասցնում», - ընդգծել է Թրամփը: Նա հավելել է, որ չի մտահոգվում ամերիկյան օբյեկտների կամ տարածքի վրա հնարավոր հարձակումներով. «Դա պատերազմի մի մասն է. դա դուր գա մարդկանց, թե ոչ, դա այդպես է»:

Թրամփը, խոսելով Իրանում ռազմական գործողության նպատակներին հասնելու մասին, նշել է, որ դա ժամանակի հարց է: «Ես շատ բան գիտեմ, եւ ես անպայման կիմանամ, թե երբ դրանց կհասնենք: Եւ դա արդեն շատ մոտ է»,-ասել է Սպիտակ տան ղեկավարը:

Ավելի վաղ NewsNation-ի լրագրողը հայտնել էր, որ Թրամփն ասել է, որ ԱՄՆ-ն կարձագանքի Էր Ռիադում ամերիկյան դեսպանատան վրա իրանական անօդաչու թռչող սարքերի գրոհներին եւ Իրանի դեմ գործողության ընթացքում վեց ամերիկացի զինծառայողների զոհվելուն:

Իսրայելը եւ ԱՄՆ-ն փետրվարի 28-ից հարվածներ են հասցնում Իրանին, որն էլ պատասխան հարվածներ է հասցնում Իսրայելին ու տարածաշրջանի երկրներում գտնվող ամերիկյան ռազմաբազաներին եւ էներգետիկ օբյեկտներին:

ՋԵՅ ԴԻ ՎԵՆՍԸ ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ Է

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը կարծում է, որ ԱՄՆ-ի գործողությունն Իրանում տարբերվում է Իրաքում եւ Աֆղանստանում ռազմական գործողություններից եւ տարիներ չի տեւի: Այս մասին նա ասել է Fox News-ի հետ հարցազրույցում:

«Տարբերությունն այն է, որ նախագահը հստակորեն սահմանել է, թե ինչի է ուզում հասնել: Դոնալդ Թրամփը պարզապես ոչ մի դեպքում թույլ չի տա, որ այս երկիրը ներքաշվի բազմամյա հակամարտության մեջ՝ առանց տեսանելի ավարտի եւ հստակ նպատակի»,-ասել է Վենսը: ԱՄՆ փոխնախագահի կարծիքով՝ հստակ նպատակի առկայությունը վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ն չի պատրաստվում բախվել այն խնդիրներին, որոնք «մենք ունեցել ենք Իրաքի եւ Աֆղանստանի հետ»:

Վենսի խոսքով՝ նպատակն է երաշխավորել, որ Իրանը միջուկային զենք չստանա: «Նա (Թրամփը) նպատակը սահմանել է հետեւյալ կերպ. Իրանը չի կարող ունենալ միջուկային զենք եւ պետք է ստանձնի երկարաժամկետ պարտավորություն՝ երբեք չփորձել վերականգնել իր միջուկային ներուժը»,-հայտարարել է փոխնախագահը:

Վենսը նաեւ ասել է, թե Թրամփը գիտեր, որ Իրանը պատրաստ է միջուկային զենք ստեղծել, եւ որոշել է միջոցներ ձեռնարկել, քանի որ «դա անհրաժեշտ է ազգային անվտանգությունը պաշտպանելու համար»:

● *Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ անցած 3 օրում գրանցվել է 42 ավտովթար. 59 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ երկխոսությունը ներկայում շարունակվում է տարբեր մակարդակներում, առանձին հարցերի շուրջ: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այս մասին հայտարարել է ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը: «Մենք ամերիկացի գործընկերների հետ երկխոսություն ենք վարում տարբեր մակարդակներում, տարբեր ձեւաչափերով, առանձին ճգնաժամերի, մեր հարաբերությունների առանձին ուղղությունների շուրջ: Սակայն ես ամենեւին չեմ կասկածում, որ անխուսափելի է դարձել սկզբունքային, համապարփակ զրույցն այն մասին, թե ինչպես է ԱՄՆ-ն տեսնում աշխարհը, ինչպես է նա տեսնում իրեն այս աշխարհում եւ ինչ դեր է նա հատկացնում բոլոր մնացածներին»,-ասել է նա Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում: Լավրովն ընդգծել է, որ «դա հատկապես միջուկային տերությունների համար է արդիական հասկանալի պատճառներով». «Նախագահ Պուտինը ժամանակին առաջարկել է անցկացնել միջուկային զենք ունեցող հինգ պետությունների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների գագաթնաժողով, եւ այս նախաձեռնությունը լիովին պահպանում է իր արդիականությունը: Այս զրույցը վաղուց էր հասունացել: Ես կասեի՝ այն վաղուց է գերհասունացել, եւ ես հույս ունեմ, որ Թրամփի վարչակազմում հասկանում են դա եւ պատրաստ կլինեն նման լուրջ խոսակցության»:

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Չինաստանը հարգում է Իրանի «օրինական իրավունքը՝ միջուկային էներգիան օգտագործել խաղաղ նպատակներով», հայտարարել է Չինաստանի արտաքին գործերի նախարարության խոսնակը՝ միաժամանակ կոչ անելով դադարեցնել ռազմական գործողությունները եւ վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ: Այս մասին հաղորդում է Reuters գործակալությունը: Չինաստանի ԱԳՆ խոսնակ Մաո Նինը մամուլի ասուլիսում նշել է, որ բանակցությունների ընթացքում ԱՄՆ-ի կողմից Իրանին ուղղված հարվածները «խախտում են միջազգային իրավունքը եւ միջազգային հարաբերությունների հիմնական սկզբունքները»: «Իրանի միջուկային հարցը, ի վերջո, պետք է վերադառնա քաղաքական եւ դիվանագիտական կարգավորման հուն», - ասել է խոսնակը:

Դիվանագետին հարց են ուղղել, թե ինչ հնարավոր ազդեցություն կարող են Չինաստանի նավթի մատակարարումների վրա ունենալ ԱՄՆ-ի ռազմական գործողությունները Վենեսուելայում եւ Իրանում: Նա նշել է, որ Չինաստանը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու իր սեփական էներգետիկ անվտանգությունը:

Իրանին Իսրայելի եւ ԱՄՆ-ի հարվածներից հետո Թեհրանը պատասխան հարվածներ է հասցնում ինչպես Իսրայելին, այնպես էլ տարածաշրջանի երկրներում գտնվող ամերիկյան ռազմակայաններին եւ էներգետիկ օբյեկտներին: Իրանը նաեւ սպառնացել է հարվածել բոլոր նավերին, որոնք անցնում են Հորմուզի նեղուցով: Համաշխարհային նավթի մատակարարումների 20%-ն անցնում է այս նեղուցով:

LOVE IS ՔԱՐՏԵՐ ՅՈՒՆԻԲԱՆԿԻՑ

ՓԱՐԻԶ ՌՈՄԱՆՏԻԿ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՀԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Յունիբանկը թողարկել է Love Is... բանկային քարտերի նոր շարք՝ վառ եւ ջերմ հիշողություններ արթնացնող դիզայնով:

Նոր քարտերը համատեղում են շահավետ սպասարկման պայմաններն ու լեգենդար նկարազարդումներից ոգեշնչված ձեւավորումը՝ միաժամանակ հաճախորդներին ընձեռելով Փարիզ ռոմանտիկ ուղեւորություն շահելու հնարավորություն: Հաճախորդները կարող են չորս դիզայնից ընտրել այն տարբերակը, որն առավել համահունչ է իրենց տրամադրությանը, եւ ունենալ քարտ, որը ամեն օր կհիշեցնի հոգատարության եւ սիրո կարեւորության մասին:

Յունիբանկի Love Is... քարտերը բազմարժութային են. քարտին կցված են հաշիվներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով եւ եվրոյով, ինչը հարմար է հատկապես արտերկրում վճարումների համար: Քարտերի օրական սահմանաչափը կազմում է մինչեւ 2.5 մլն դրամ: Քարտապաններին տրամադրվում է հարմար մոբայլ հավելված, անվճար SMS ծանուցումների հնարավորություն եւ շուրջօրյա աջակցություն: Քարտը ձեւակերպելու համար կարելի է դիմել Յունիբանկի ցանկացած մասնաճյուղ:

«Love Is... քարտը ոչ միայն հարմար միջազգային Visa քարտ է՝ ժամանակակից հնարավորություններով, այլեւ ջերմ հիշողություններ ու դրական զգացողություններ փոխանցելու միջոց: Վստահ ենք, որ քարտերի այս շարքը կվայելի մեծ պահանջարկ այն հաճախորդների շրջանում, ովքեր գնահատում են ոչ միայն հարմարավետությունն ու տեխնոլոգիական առաջընթացը, այլեւ անկեղծ սիրո մասին պատմությունները»,-նշել է Յունիբանկի Վարչության նախագահի առաջին տեղակալ, Մանրածախ բիզնեսի զարգացման եւ վաճառքների տնօրեն Գուրգեն Ղուկասյանը:

Հայտնի նկարազարդումները հիմնված են նորզելանդացի նկարչուհի Քիմ Գրովի եւ նրա իտալացի ամուսնու՝ Ռոբերտո Կազալիի իրական սիրո պատմության վրա: Սկզբում ստեղծված որպես անձնական հաղորդագրություններ՝ դրանք ժամանակի ընթացքում դարձել են զգացմունքների համաշխարհային խորհրդանիշ: Այսօր այդ պատմությունը շարունակվում է Յունիբանկի քարտերի միջոցով:

Սիրո քաղաք՝ Փարիզ երկու անձի համար նախատեսված մեկշաբաթյա ուղեւորության խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է պարզապես ձեւակերպել Յունիբանկի Love Is... քարտը եւ մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 1-ը կատարել առնվազն մեկ գործարք:

ԲԱՆԿԵՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է Profit+ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԱՅԻՆ ՓԱԹԵԹ

Հայէկոնոմբանկն առաջարկում է Profit+ աշխատավարձային փաթեթ, որը հնարավորություն է տալիս, կախված աշխատավարձի չափից, ստանալ Arca, VISA եւ Mastercard տարբեր դասի վճարային քարտեր՝ առանց տարեկան սպասարկման վճարի:

Profit+ փաթեթն ակտիվացնելու համար անհրաժեշտ է ունենալ VISA Guru կամ VISA Guru Travel քարտ: Քարտերը հնարավոր է պատվիրել նաեւ AEB Mobile հավելվածի միջոցով եւ ստանալ այն անվճար առաքմամբ Երեւանում (ՀՀ մարզերում առաքման վճարը՝ 1,000 դրամ):

Փաթեթի շրջանակում կարող եք ստանալ VISA Guru քարտը՝ 1,000 դրամ տարեկան սպասարկման վճարով, իսկ VISA Guru Travel կամ Mastercard World քարտերը՝ 30% զեղչված տարեկան սպասարկման վճարով:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅԵԼ ԵՎՍ 2 ԳԻՐՔ

Newmag հրատարակչությունը «Ֆաստ Բանկ»-ի հովանավորությամբ հայերեն է թարգմանել եւ տպագրել համաշխարհային բեսթսելլերների հեղինակ Ադամ Գրանտի երկու հայտնի գրքերը՝ «Ինքնատիպները» եւ «Թաքնված ներուժը»: «Ինքնատիպների» հեղինակը պատմում է, թե ինչպես դառնալ ստեղծագործ, հակադրվել խմբային մտածողությանը եւ իրականացնել ոչ ստանդարտ գաղափարներ: Նա գիտական հետազոտություններով եւ իրական օրինակներով է ցույց տալիս, որ ստեղծագործությունը հմտություն է, որը կարելի է զարգացնել՝ հաղթահարելով վախը, ժամանակին գործելով: Իսկ «Թաքնված պոտենցիալը» գիրքը խոսում է յուրաքանչյուր մարդու ներսում թաքնված հնարավորությունների մասին: Հեղինակն օգտագործում է կրթության, առաջնորդության եւ մոտիվացիայի իրական օրինակներ՝ ցույց տալու համար, որ հաջողությունը կախված է ոչ թե բնածին տաղանդից, այլ կարողությունների մշակումից:

«Ֆասթ Բանկի հետ մեր համագործակցությունը շատ արդյունավետ է, որովհետեւ եւ բանկային միջավայրը, եւ գրական միջավայրն իրար մոտ են մի քանի առումներով. ինքնուրույն մտածող մարդկանց հարաբերություններ են բանկային համակարգում»,-նշել է Newmag հրատարակչության գլխավոր խմբագիր Գնել Նալբանդյանը:

«Ֆասթ Բանկ»-ը կարեւորում է կրթության եւ ընթերցանության խթանումը՝ հավատալով, որ գիտելիքն ու նորարար մտածողությունը կարեւոր նախադրյալներ են անհատի եւ հասարակության առաջընթացի համար: «Ֆասթ Բանկ»-ի աջակցությամբ իրականացված այս ծրագիրն ընդգծում է, թե ինչպես ընթերցանությունն ու գիտելիքը կարող են շարժիչ ուժ դառնալ՝ նոր գաղափարների իրագործման եւ հաջողության հասնելու համար:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ

ՆՈՐ ԿՏԱՎ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Պարզվել է, որ 17-րդ դարի «Զաքարիայի տեսիլքը տաճարում» կտավը ստեղծվել է հոլանդացի վարպետի կողմից. դրա իսկությունը հաստատել են Ռեյքսմուզեի հետազոտողները՝ օգտագործելով առաջադեմ տեխնոլոգիաներ:

Նիդեռլանդների Ռեյքսմուզեի հետազոտողները հայտարարել են հոլանդացի վարպետ Ռեմբրանդտի նոր կտավի հայտնաբերման մասին:

«Զաքարիայի տեսիլքը տաճարում» կտավը Ռեմբրանդտ վան Ռեյնի այլ աշխատանքների հետ ուշադիր համեմատելուց հետո, որոնք բացահայտում են նրա ոճական եւ թեմատիկ փոփոխությունները, հետազոտողները եզրակացրել են, որ 17-րդ դարի նկարը իսկական է եւ ստեղծվել է նույն ժամանակահատվածում:

Նկարում պատկերված է քահանայապետ Զաքարիայի մասին աստվածաշնչյան պատմությունից մի դրվագ, որը ցույց է տալիս այն պահը, երբ Գաբրիել հրեշտակապետը հայտնվում է Զաքարիային տաճարում: Հրեշտակը տեղեկացնում է Զաքարիային, որ չնայած իր եւ կնոջ առաջացած տարիքին, նրանք որդի կունենան՝ Հովհաննես Մկրտչին: Հրեշտակն ինքը նկարում չի պատկերված, բայց վերին աջ անկյունից թափվող լույսը ազդարարում է նրա ժամանումը: Զաքարիայի դեմքի զարմանքի արտահայտությունը փոխանցում է նրա անհավատությունը:

«Հրաշալի է, որ մարդիկ այժմ կարող են ավելին իմանալ երիտասարդ Ռեմբրանդտի մասին. նա ստեղծել է այս խորապես հուզիչ աշխատանքը Լեյդենից Ամստերդամ տեղափոխվելուց կարճ ժամանակ անց,-ասել է Ռեյքսմուզեի տնօրեն Տակո Դիբբիտսը:-Դա Ռեմբրանդտի յուրահատուկ պատմողական ունակության հրաշալի օրինակ է»:

Մնացել է ստվերում

1960 թվականին նկարը հանվել է Ռեմբրանդտի հավաքածուից: 1961 թվականին մասնավոր հավաքորդի կողմից ձեռք բերվելուց հետո այն անհետացել է հանրության տեսադաշտից: Քանի որ նկարի գտնվելու վայրը անհայտ է մնացել, մասնագետները չեն կարողացել ուսումնասիրել այն այդ ժամանակվանից ի վեր:

Այնուամենայնիվ, ներկայիս սեփականատերը վերջերս կապ է հաստատել Ռեյքսմուզեի հետ՝ թույլ տալով նկարը մանրակրկիտ ուսումնասիրել 65 տարվա ընթացքում առաջին անգամ:

Սա հանգեցրել է երկամյա ուսումնասիրության, որը պարզել է, որ «Զաքարիայի տեսիլքը տաճարում» կտավում օգտագործված բոլոր ներկերը հանդիպում են նույն ժամանակաշրջանի Ռեմբրանդտի այլ աշխատանքներում:

Նկարչական ոճը եւ ներկի շերտի կառուցվածքը նույնպես համեմատելի են Ռեմբրանդտի այլ վաղ շրջանի աշխատանքների հետ: Մակրո-ռենտգենյան սկանավորումը եւ տեսողական վերլուծությունը հետագայում բացահայտել են կոմպոզիցիոն փոփոխություններ, որոնք հաստատում են աշխատանքի իսկությունը:

Ստորագրության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն բնօրինակ է, իսկ փայտե վահանակի դենդրոժամանակագրական վերլուծությունը հաստատեց 1633 թվականի ճիշտ ամսաթիվը:

Թեմային առումով նկարը նաեւ անթերիորեն տեղավորվում է այն ժամանակվա 27-ամյա նկարչի ստեղծագործության մեջ՝ այնպիսի աշխատանքների հետ միասին, ինչպիսիք են «Դանիելը եւ Կյուրոսը Բահալի կուռքի առջեւ» (1633, Զ. Պոլ Գետտի թանգարան, Լոս Անջելես), «Սիմեոնի երգը» (1631, Մաուրիցհեյս, Հաագա) եւ «Երեմիան ողբում է Երուսաղեմի կործանումը» (1630, Ռեյքսմուզեում, Ամստերդամ):

Նկարը երկարաժամկետ վարձակալության է տրվել Ռեյքսմուզեում մասնավոր հավաքորդից եւ հանրության համար բաց կլինի չորեքշաբթի՝ մարտի 4-ից սկսած:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԾԱՆՐ ՀԱՐՎԱԾ

Դորտմունդի «Բորուսիայի» մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ թիմի ավագ էմրե Ջանը ծանր վնասվածք է ստացել Մյունխենի «Բավարիայի» դեմ Բունդեսլիգայի հերթական տուրի խաղում (2:3):

Բժշկական հետազոտության արդյունքում պարզվել է, որ գերմանացի կիսապաշտպանը ստացել է ձախ ծնկի առաջային խաչաձեւ կապանի պատռվածք: Ակնկալվում է, որ ֆուտբոլիստի ապաքինումը կպահանջի տեւական ժամանակ, եւ նա երկար ամիսներով դուրս կմնա շարքից:

Դորտմունդյան ակումբի մարզական տնօրեն Սեբաստիան Կելն անդրադարձել է թիմի ավագի կորստին. «Էմրեի վնասվածքը ծանր հարված է ոչ միայն իր, այլեւ ողջ ակումբի համար: Նա մեր ավագն է, ով մշտապես նվիրվում է թիմին եւ հանդիսանում է մեր կարեւորագույն մասնիկներից մեկը: Առաջիկա ամիսներին Էմրեն կստանա մեր լիակատար աջակցությունը՝ լիարժեք ապաքինվելու համար»:

Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում Ջանը դորտմունդցիների կազմում անցկացրել է 16 հանդիպում՝ դառնալով 3 գոլի հեղինակ:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

UFC-ի նախկին չեմպիոն Մերաբ Դվալիշվիլին անդրադարձել է ԱՄՆ-ում կայացած RAF 6 գրեփլինգի մրցաշարում հայազգի մարտիկ Արման Ծառուկյանի եւ ամերիկացի Ջորջիո Պուլասի աղմկահարույց գոտեմարտին:

Վրացի մարտիկը, ով մրցաշարին ներկա է եղել հանդիսականի կարգավիճակում, միջոցառումից հետո զրուցել է Պուլասի հետ եւ նշել, որ Ծառուկյանին չի համարում այս դիմակայության արդարացի հաղթող:

«Առաջին հերթին կցանկանայի տեսնել ձեր եւ Արմանի ձեռքսեղմումն ու ռեւանշը: Դուք ապտակում էիք իրար, դա զվարճալի էր, բայց ես ուզում եմ տեսնել իրական հաղթողին, քանի որ այսօր մենք նրան այդպես էլ չտեսանք: Ես ըմբիշ չեմ, կանոններին ու մրցավարությանը լավ չեմ տիրապետում, բայց հուսով եմ՝ դուք կկազմակերպեք այդ ռեւանշը»,- ասել է Դվալիշվիլին:

ՄԵՍՍԻԻ ԴՈՒԲԼԸ ՕԳՆԵՑ

ՄԼՍ-ի կանոնավոր առաջնության հերթական խաղում «Ինտեր Մայամին» հյուրընկալվելիս ուժերը չափել է «Օռլանդո Սիթիի» հետ եւ տպավորիչ քամբեքի շնորհիվ հաղթել 4:2 հաշվով:

Առաջին խաղակեսից հետո դաշտի տերերը հաղթում էին 2:0 հաշվով. գոլերով աչքի էին ընկել Մարկո Պաշալիչն ու Մարտին Օխեդան: Սակայն ընդմիջումից հետո հյուրերը բեկեցին հանդիպման ընթացքը: Արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսին դարձավ դուբլի հեղինակ, եւս մեկական անգամ աչքի ընկան Մատեո Սիլվետին ու Տելասկո Սեգովիան՝ ապահովելով մայամցիների հաղթանակը:

Այս խաղից հետո «Ինտեր Մայամին» ընթացիկ մրցաշրջանում գրանցել է 1 հաղթանակ եւ 1 պարտություն, իսկ «Օռլանդո Սիթին» կրել է երկրորդ անընդմեջ պարտությունը:

ԱՇԽԱՐՀ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԿԱՌՈՒՅՑԸ

Բարսելոնան վերջապես նշում է պատմական պահը. շինարարության մեկնարկից 144 տարի անց Անտոնիո Գաուդիի կենտրոնական աշտարակի վերջին տարրը տեղադրվել է Սագրադա Ֆամիլիայի վրա, հաղորդում է Hypebeast-ը: Տպավորիչ՝ 17 մետրանոց պողպատե եւ ապակե խաչաձեւ կառուցվածքը բարձրացվել է այնպիսի բարձրության, որը պաշտոնապես ավարտում է Հիսուս Քրիստոսին նվիրված աշտարակը: Եկեղեցին այժմ ունի 172.5 մետր բարձրություն՝ գերազանցելով Գերմանիայի Ուլմ Մինստերին՝ դառնալով աշխարհի ամենաբարձր եկեղեցին: Սա նշանավորում է գլխավոր շենքի շինարարության վերջին փուլը, որի ավարտը նախատեսված է 2026 թվականին՝ Գաուդիի մահվան հարյուրամյակին: Այնուամենայնիվ, «Փառքի ճակատի» մանրամասն մշակված մասի վրա աշխատանքները կշարունակվեն եւս տասը տարի, ինչը թույլ կտա եկեղեցու հետագա կատարելագործմանը: Կենտրոնական աշտարակի պաշտոնական բացման արարողությունը տեղի կունենա հունիսի 10-ին:

ԿԱՍԿԱԾՆԵՐ

Ջիմ Քերիի՝ «Սեզար» մրցանակաբաշխությանը մասնակցելու պատասխանատուներից մեկը խոսել է դերասանի՝ ֆրանսիական մրցանակաբաշխությանը անձամբ ներկա գտնվելու կասկածների մասին: 64-ամյա Քերին պատվավոր մրցանակ է ստացել կինոյի եւ հեռուստատեսության ոլորտում իր ներդրման համար Փարիզում կայացած մրցանակաբաշխության ժամանակ, որը համարժեք է «Օսկար»-ին: Դերասանի՝ հանրության ուշադրության կենտրոնում վերադարձը արարողությունից հետո զգալի քննարկման է արժանացել առցանց հարթակներում, եւ որոշ մարդիկ ենթադրում են, որ դերասանի փոխարեն ներկա է եղել նրա նմանակը: «Սեզար» մրցանակաբաշխությունից առաջ «Թրուման շոու»-ի աստղը վերջին անգամ հանրության առաջ հայտնվել էր 2025 թվականի նոյեմբերին, երբ նա Soundgarden-ին ընդունեց Ռոքնռոլի փառքի սրահ:

«Ջիմ Քերիի այցը նախատեսված էր այս ամռանից: Սկզբից ի վեր նա չափազանց հուզված էր Ակադեմիայի հրավերով»,-այս մասին ասել է Ֆրանսիայի «Սեզար» մրցանակաբաշխության գլխավոր պատվիրակ Գրեգորի Կոլիեն: «Ութ ամիս շարունակական, կառուցողական քննարկումներ: Նա ամիսներ շարունակ աշխատել է իր ֆրանսերեն ելույթի վրա՝ հարցնելով ինձ որոշակի բառերի ճշգրիտ արտասանության մասին: Նա եկել էր իր զուգընկերուհու, դստեր, թոռան եւ 12 մտերիմ ընկերների եւ ընտանիքի անդամների հետ: Նրան ուղեկցում էր նրա վաղեմի հրապարակախոսը: Այնտեղ էր նրա հին ընկեր Միշել Գոնդրին, ով նրա հետ նկարահանել է մեկ ֆիլմ եւ երկու սերիալ, եւ նրանք ուրախ էին կրկին տեսնել միմյանց»:

Քերիի ֆիզիկական տեսքին անդրադառնալով՝ Կոլիեն ասել է. «Ինձ համար դա խնդիր չէ: Պարզապես հիշեք նրա առատաձեռնությունը, բարությունը, բարեգործությունը, նրբագեղությունը»:

Ինչպես Քերիի ներկայացուցիչը մարտի 2-ին PEOPLE-ին հայտնել է՝ «Ջիմ Քերին մասնակցել է «Սեզար» մրցանակաբաշխությանը, որտեղ նա ստացել է իր պատվավոր «Սեզար» մրցանակը»:

Քերին արարողությանը ներկայացել է իր 38-ամյա դստեր՝ Ջեյնի, Ջեյնի դեռահաս որդու՝ Ջեքսոնի եւ իր «ուղեկցորդ» Մին Ահի հետ, որոնցից յուրաքանչյուրին նա հիշատակել է միջոցառման ժամանակ իր ելույթում:

● *Փետրվարի 4-ին՝ ժամը 13:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «ԿԱՏՎԻ ՏՈՒՆԸ» երաժշտական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000, 2000, 3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Հայկ Սողոմոնյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Արամ Օհանյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն/24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),

5) նախնական (արհեստագործական) կամ միջին-մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում ներկայացվում է փաստաթուղթ զինվորական կոմիսարիատից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը Իսրայելում բնակվող լրագրող Գեղամ Բալյանի X-ի էջից

Իսրայելի Հայֆա քաղաքում վանդալիզմի է ենթարկվել Հայոց ցեղասպանության հրապարակը նշող փողոցային ցուցանակը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 6 - 9 0 - 3
	Կոտայքի լեռներ	- 6 - 9 0 - 3
	Կոտայքի նախալեռներ	- 1 - 4 + 1 + 4
	Գեղարքունիք	- 5 - 9 0 - 3
	Լոռի	- 3 - 7 + 1 + 4
	Տավուշ	- 2 - 5 + 2 + 5
	Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 3
	Արագածոտնի նախալեռներ	0 - 4 + 2 + 6

	Արարատ	- 2 + 1 + 4 + 7
	Արմավիր	- 1 + 2 + 6 + 9
	Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 2 + 1
	Վայոց ձորի նախալեռներ	- 2 + 2 + 5 + 9
	Սյունիքի լեռներ	- 6 - 9 0 - 3
	Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 + 4 + 7
	Սյունիքի հովիտներ	0 + 4 + 9 + 13
	Երեւան	0 - 2 + 5 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **03.03.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*